

Ս Ե Կ Ո Ւ

Ա Մ Ա Ա Գ Ի Ռ

Ա Զ Գ Ե Յ Ե , Բ Ե Լ Ո Ւ Յ Ե , Գ Ր Ե Վ Տ Տ Ե Յ
Ե Ւ Ք Ե Վ Ե Յ Ե


Ա Թ Ե Զ , Ի Ւ Տ Ե Ր Ե

Յ Ե Ր Ա Ւ Յ Ե Դ Ո

Ե Տ Պ Ա Ր Ա Ն Ա Տ Ա Ր Ա Ն Ա Տ

1866





Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՆԴՀԱՅԻ ԲԵՆԵՇՈՒԹԵԿՆ ԵՒ ԳՐԵՎԵՏԵԿՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ. ԹԻՖ 5.

ՀԵԶԱՆ ՄԻԱՄԵԱՅ

ՄԱՅԻՍ 1866

ԳՐԱԳԻՏԱԿԱՆ Ք

Ե Փ Բ Ե Մ Կ Ե Թ Ա Ռ Դ Կ Ո Ս Ս Ր Ո Ո Յ

Ա Զ Ա Յ Ի Ն Գ Ր Ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը , ո ր
ա զ գ ի մ ի մ ո ա ւ ո ր ա կ ա ն և բ ա ր ո յ ա կ ա ն
հ ո գ ւ շ յ ն պ ա տ ի ե ր ը կ ը ն շ ա ն ա կ է , ս ե ր տ
յ ա ր ա բ ե ր ո ւ թ ե ա մ բ ք կ ա ս լ ո ւ ա ծ ե ն
ն յ ն ա զ գ ի ն ք ա ղ ա բ ա կ ա ն ո ւ թ ե ն ը հ ե տ ,
ա յ ն պ է ս ո ր ք ա ղ ա բ ա կ ա ն ո ւ թ ե ն է զ ո ւ ր կ
ա զ գ մ ի զ ո ւ ր կ է ն ա ե ւ գ ր ա կ ա ն ո ւ
թ ե ն է : Ա յ ս ձ շ մ ա ր տ ո ւ թ ե ա ն ս մ ե զ
կ ը վ ի ա յ ի ն ի ւ ր ա բ ա ն չ ի ւ ր ա զ գ ա ց պ ա տ
մ ո ւ թ ի ւ ն ն ե ր ը , ո ւ ր կ ը տ ե ս ն ե ն ք ո ր
տ է ր ո ւ թ ե ա ն մ ի ծ ա ղ կ ա ծ ո ւ խ ա ղ ա
զ ո ւ թ ե ա ն ժ ա մ ա ն ա կ , ե ր բ ի ւ ր զ է ն
ք ե ր ո ւ ն ո ւ ժ ը թ շ ն ա մ ե ա ց դ է մ բ ա
ն ե ց ը ն ե լ ո ւ հ ա ր կ չ է ե ղ ա ծ , տ ո ւ ա ծ
է բ ո լ ո ր ո ւ ժ ը գ ր ա կ ա ն ո ւ թ ե ա ն ե ւ
լ ե զ ո ւ ի ն բ ա ր գ ա ւ ա մ ե լ ո ւ ն . և ն յ ն մ ի
ջ ա ց ի ն յ ե ր ե ւ ա ն ե լ ա ծ ե ն զ ա ն ա ղ ա ն մ ա
տ ե ն ա գ ի ր ն ե ր , պ ա տ մ ա ր ա ն ն ե ր , գ ի տ-

ն ա կ ա ն ն ե ր , ք ա ջ ա լ ե ր ո ւ թ ի ւ ն գ տ ն ե լ ո վ
ի ր ե ն ց տ է ր ո ւ թ ե ա ն ը կ ո ղ մ է ն , ի ս կ ե ր բ
ե ր կ ա ր ա տ ե ւ պ ա տ ե ր ա զ մ ն ե ր և օ տ ա ր
յ ա ր ձ ա կ ո ւ մ ն ե ր վ ե ր ա յ գ ա լ ո վ խ ա ղ ա
զ ո ւ թ ի ւ ն ը տ է զ ի տ ո ւ ա ծ է ա յ ն ս ա հ
մ ա ն ն ե ր է ն , մ ա տ ե ն ա գ ր ո ւ թ ի ւ ն ն ա լ
ի ն կ ա ծ ո ւ մ ո ւ ց ո ւ ա ծ է :

Ա յ ն ը կ ը հ ա ս տ ա տ ե ն ն ա ե ւ մ ե ր
տ ո հ մ ա յ ի ն պ ա տ մ ո ւ թ ի ւ ն ք : Ե ր բ Ա ը
ո ա մ շ ա պ ո ւ հ ս ա հ մ ա ն ա կ ի ց պ ե տ ո ւ
թ ե ա ն ց կ ո ղ մ է ն ա ն կ ա ս կ ա ծ խ ա ղ ա զ ո ւ
թ ե ա ն մ է ջ կ ը թ ա գ ա ւ ո ր է ր , ձ ե ռ ք ը
ե ր կ ն ց ո ւ ց Ա . Ա ն ե օ ր ո ս կ ի ն և Ա . Ա ս
հ ա կ ի ն , և ա ն մ ի ջ ա պ է ս հ ա յ կ ե ա ն գ ը ս լ
ր ո ւ թ ե ա ն ա ռ ա ջ ի ն գ ա ր ը ս կ լ ը ն ա ւ ո
ր ե ց ա ւ . ո ր ո յ պ ա տ մ ո ւ թ ի ւ ն ը հ ա ն ր ա
ծ ա ն օ թ է բ ո լ ո ր ա զ գ ի ս : Ա զ գ ա յ ի ն
հ ր ա ս լ ա բ ա կ ա կ ա ն դ պ ր ո ց ն ե ր բ ա ց ո ւ ե -

ցան արքունի հրամանաւ, և սուրբ վարդապետաց հսկողութեն ու վարժապետութեան ներքեւ : Ծէպէտեւ խաղաղութիւնը երկար չտեւեց ու պարսկական կրօնամոլութիւնը Հայաստանը տակն ու վերայ ըրաւ, սյուռ ամենայնիւ ազգային դպրութիւնը արդէն հաստատ կերպիւ ծաղկած ըլլալով, որքան որ աւելի յառաջադիմութիւններ ցուցուց⁽¹⁾, բայց մնաց նոյն վիճակին մէջ բաւական ժամանակ, այս տարբերութեամբ միայն, որ հրապարակական դպրոցները վանքերու մէջ փոխադրուեցան և դիտութիւնն ու ուսմունքը մենավաճառութիւն եղաւ եկեղեցականաց ձեռք : Եւ թէպէտ ժամանակ ժամանակ ընտիր աշակերտներ իրեն հետեւող ունեցաւ, բայց ոչ և մշակողներ : Վասն զի հետագայ դարերու մատենագրութեանց մէջ ի զուր կը փնտուեմք նախնեաց գրչութեան պարզ ու միանդամայն վսեմ ու քաղցր ոճը, այլ երթալովինկաւ ազգային դպրութիւնը իրեր նախնական հեղինակութենէն ու հոգէշունչ ազգեցութենէն : Եւ այս վիճակը եկաւ հասաւ մինչեւ Որութիւննեաց հարստութիւնը, որ ոսկեղէն Բ. դարու ծնունդ տուաւ, եւ առաջին սուրբ թարգմանչաց՝ իրաւամբք յաջորդեցին Կերսիսեան եւ Գրիգորեան Պահլաւունիք եւ այլք բազումք : Այսոց ժամանակ տոհմային գրականութիւնը կրկին փայլ առաւ, եւ գրեթէ առաջիններուն ոգւսով սկսաւ մշակուիլ և նոր թարգմանու-

թիւններով եւս ճոխանալ զանազան մեկնութեանց և վիայաբանութեանց հայերէն լեզուի փոխարկուելով : Վակայն գիտութեանց այս երկրորդ գարը թէ երկար չտեւեց և թէ առաջնոյն ազգեցութիւնը և աջողութիւնը չունեցաւ . վասն զի Որութիւննեան հարստութիւնը՝ ի բաց առեալ ամենափառիկ ժամանակ մի խաղաղութեան, բարբարոս ազգաց սուրբերուն ու թուրերուն տակ ծնաւ կեցաւ ու մարեցաւ : Վասն որոյ ազգային դպրութիւնն ալ անոր քաղաքական բազդին վիճակելով՝ անկէ առաջ խանգարեցաւ ու գրեթէ ոչընչացաւ : Արբազան թարգմանչաց, ձարտարախօսից, վիպասանից յաջորդեցին տեղ տեղ և դարձեալ վանքերու մէջ մի քանի աննշան վարդապետք և հետեւակ մատենագիրք, որոնք բոլորովին զրկուելով առաջին և վերջին թարգմանչաց ընտիր ճաշակէն, խանգարեցին բոլոր լեզուն, օտարոտի անհարազատ բացատրութիւններով, ինչպէս յայտնի կ'երեւի տասն և եօթներորդ և տասն և ութերորդ դարուն մէջ անհամար թարգմանութեանց և հեղինակութեանց մէջ : Այս խանգարման գլխաւոր պատճառ մի եւս եղած է Անիթօրաց ժամանակ անոնց հայերէն լեզուն հարեւանցի սորվելով ու լատինաբան ոճով գրած անձունի երկասիրութիւնները, որոնք տակաւ առ տակաւ տարտծեցաւ աղքին մէջ, և հազիւ ուրեմն տասն և իններորդ դարը վերայ հասնելով վախճան տուաւ ազգային լեզուին խոպառ խանգարմանը : Վիստն դարձեալ վանքերուն մէջէն քաղաքներու մէջ փոխագրուիլ ուսումներն ու գիւտութիւնը . նոր թարգմանութիւններու առաջին և երկրորդ սկիփ դարերու հայերէն քաղցր ու հարազատ

(1) Այս միջացիս, այսինքն հինգերորդ դարու կեսէն յետոյ մէծ փոփոխութիւնն մի կը գտնեմք առ զի հին մասնագրութեան և հինգերորդ դարու հեղինակութեանց հայկական ոճոյն և անոր կազմութեանը մէջ, ինչպէս զգալութեան յայտնի է մասնիքնադատականցից : Այսու ամենայնիւ ինչպէս տառաջնորդէն երկրորդը իւր փափառաթեան մէնէն ետքն ալ անի իւր հայեցի ձաշակն ու վայելութեալք :

ոճը թէեւ ոչ ճիշտ նմանողութեամբ՝ կրկին պայծառանալ ու մշակուիլ, ի ձեռն այնպիսի անձինքներու, որոնք թէպէտեւ նախնի թարգմանչաց հոդիկն հեռացեալ, սակայն գիտութեան և իմաստութեան մասին անոնց ընթացակից և ջտնակից են ի պայծառութիւն հայ դպրութեանս⁽¹⁾:

Ո՞ւր երկրորդ անգամի հայերէն դրականութեան ծաղկիլը, ինչպէս ըստինք՝ Ո՞ւրբինեան հարստութեան ժամանակը Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյ բուն իսկ ծոցին մէջն եղաւ. այսինքն Ալսոյ քահանայապետական վթուին և անոր մերձակայ շրջանին մէջ: Եւ թէպէտ հոս ալ, ուրիշ տեղերու նման շատ չտեւեց՝ թարշամեցաւ ու տերեւաթափ եղաւ իւր գեղեցկութենէ հայ դպրութեան բուրաստանը, սակայն ժամանակ ժամանակ նոյն պարտէ զին մէջ առջի հունտերէն մնացած ըլլալով, անջուր անապատին մէջ երկնքի ցօղէն սրնունդ գտնելով վթթած վայրի շուշանի պէս յանկարծ ծաղկած ու մարած ծաղկիներ տեսնուած են: Ինչպէս անցեալ դարու մէջ Ալսոյ միաբանութեան մէջէն երեւցաւ Եփրեմ կաթողիկոսը, որ մեր ներկայ յօդուածիս ալ առարկայն է, իւր դրաւոր երկասիրութեամբը ծանոթացած է մեզ. որոյ վերասցօք կ'ու-

(1) Դասն է մեզ յիշատակել հոս քանի մի աղդային դպրոցաց մէջն, ինչպէս Զմբւանիոյ Ա. Մէսրապիան դպրոցին եւայլն, դրաբառ լեզուին դաստութիւնը վերցնելու համար եղած գաղտնի ջանքերը. այնպիսիք պէտք է գիտնան որ մեր լեզուին դրականութիւնը դրաբառին մէջն է, թէ որ վերցնելով դրաբառը, ոչ գործութիւն և ոչ հայկակն լըզուի ճաշակ ու քաղցրութիւն կը մնայ: Եւ որովհետեւ դրականութիւնը կանոններու վերայ հաստատուած է. և աշխարհաբառ լեզուին շունի ընդհանուր աղգին կողմէն ընդունուած կանոններ և անհարին է ալ որ ընդունուի, ապա ուրիմն աշխարհաբառ լեզուով չեմք կընար աղգային դպրութիւն ունենալ:

զեմ խօսիլ հոս և ներկայացընել զինքը ընդհանուր աղգին և մանաւանդուսումնականաց խմբին, և անոնց՝ որ յանձն առած են աղգային դպրութիւնը պատմութեամբ աւանդելու հոգը:

Եփրեմ ծնած է տասն եւ ութեւրորդ դպրուն առաջին քառորդին մէջ, ու որդի էր Անդրկոս քահանային Աջապահից տոհմէն, և եղբօրորդի Պուկաս, Ո՞ւրբայէլու Գաբրիէլ կաթողիկոսաց, որոնք 1734 էն սկսեալ մինչեւ 1771 հետզհետէ յաջորդեցին Ալսոյ հայրապետական աթոռը:

Եփրեմ ունէր եղբայր մի եւս Պրիգոր անուն, որ աշխարհային վիճակն ընդունեց, իսկ ինքը աշխակերտեցաւ հօրեղբօրը Գաբրիէլ կաթողիկոսի քով, վարդապետ եւ եպիսկոպոս ձեռնադրուելով առաջնորդ ալ կարգեցաւ Հալէպու, ուր յամի տեառն 1769 ին իւր պարապ ժամանակը ուսման զոհելով, աշխատասիրեց յօրինել Յովինանու մարդարէութեան մեկնութիւնը:

Նոյն միջոցները Օսմանեան տէրութեան եւ Ո՞ւսաց մէջ պատերազմ ծագած ըլլալով, ինչպէս Ասիոյ շատ տեղեր, նմանապէս Կիլիկիոյ նահանգը անկարգ ու սրիկայ մարդոց ունակուս եղած էր, ուր կը տիրէին այլազգի ապստամբ ցեղեր և Ալսոյ կաթողիկոսարանը իրենց ձեռքը խաղալիկ ըրած եւ իրենց զօշաքաղութեան նպատակ դրած էին. որոնց աշքին քրիստոնէի մի մահը ու կեանքը մի և նոյն արժէքն ունէր, և բացարձակ տէր էին անոնց անձին եւ ընչիցը:

Անաւանդ պատերազմական խռովութեանց ժամանակ, ուր մասնաւոր սրիկաներու ու աւազակներու ըրած անօրէնութիւնները ու հարստահարութիւնները անպատիմ:

կը մնային, ասոնք ալ աւելի կը կատչէին և անլուր ոճրագործութեանց ասպարէզ կը բացուէր Ալսոյ Աթոռը: Այն վրդովմանց և վտանգաց մէջ իբրեւ միակ նեցուկ և ապաստանարան էր Կիլիկիոյ ժողովրդոց և միաբանից՝ Դաբրիէլ Կաթողիկոսը, բայց երբ երանելի անձը ելուզակաց եւ ապստամբաց ձեռօք իբրեւ որոշ անխընայ դաշտին մէջ սպանուեցաւ 1770 սեպտեմբերի 10 ին, հազիւ թէ հետեւեալ օրը որ էր շաբաթ՝ թաղեցին անոր մարմինը, անօրէն սպանողը յարձակեցան Հիփրեմայ և միաբանից վերայ. և ինչ էր ասոնց միտքը, թողունք որ ինքը խօսի: “Ի վաղիւն յորժամ զշաբաթացեալն ի կենաց հանգուցաք ի դիր հանգստեան յաւուր շաբաթու, դարձ արարին նոյն արիւնըուշտ գաղանքն խիզախելով ի վերայ մեր, և զօրն ողջոյն խոշտանգելով զմեզ, զայս ինչ պահանջելով կամ զայն. (զի) ի բացասելն մեր՝ պատճառս յօդելով նիւթեսցեն զմեզ ի չարիս”:

Այս տագնապս տասն օր շաբունակելէն յետոյ, մէկ մ'ալ յանկարծնոր ասպատակներ յարձակեցան խեղչ Հիփրեմին վերայ, չորս հարիւրէն աւելի սրիկայ և արիւնածարաւ մարդիկներ, որոնք ոչ միայն իրեն և աթոռայնոց, այլև բոլոր ժողովուրդը ազգատ ընել էր միտքերնին: Հիփրեմեպիսկոպոս և միաբանք արդէն գերեզմանի մէջ կը համարէին զիբենք. փրկութեան և ոչ մի ճանապարհ մընացեր էր. ոչ ատեան կար բողոքելու, ոչ զօրութիւն գիմադրելու, և ոչ իսկ հարստութիւն անոնց ընչափաղութիւնը յագեցընելու: “Հւմինչ այսպէս սպառեցան, կ'ըսէ, առի մէնջ բարիքն և հատաւ ազատութեանն վստահութիւն, յայնժամը ըզ

զարմանալիս ներգործեաց (Ասուուած) . վասն զի սովորէ յանակնկալ ժամու ներգործել զհրաշալիս եւ դարձուցանել յայդ զստուերս մահու ու Քանզի այն վայրենամիտ մարդոց սիրտը յանկարծ ի քաղցրութիւն շրջեց, և չար խորհուրդնին ի բարին փոխեց. որոնց մէջ եղող մի քանի գըլ խաւորաց խիզչն արթնալով, պահմի իրենց անօրէնութիւնը մտածելով և հարատահարեալ ողորմելով աց խեղձութիւնը նշմարելով՝ թուլցաւ իրենց բռնութիւնը, և արիւնահեղբազուկնին: Պատեհութիւնը ձեռքէ չփախցընելու համար, տեսնելով Հիփրեմեպիսկոպոս անոնց հեռանալը, իւր ծերունի հօրը աջապահ Մարկու (Մարկոս) քահանային հետ ճամբայ կ'ինկնի դէստ ի Ատանա կու գայ, ի Ախս թողլով իւր եղբայրը տիրացու Գրիգորն ու միաբանները: Հոն գըտան բարեպաշտ ժողովուրդը, որոնք լսելով իրենց գլսի ցաւալի անցքերը, և խղճալի կերպարանքնին տեսնելով՝ կը մօրմոքէին ու կը մաղկատէին, և ոչ սակաւ մսիթարութիւն կուտային անոնց:

Հոն բոլոր ժողովուրդը մէկտեղ գալով, և Աթոռոյն խեղչ և այրիացեալ վիճակը աչաց առջեւ ունենալով, խորհեցան և որոշեցին ժառանգ կացուցանել հայրապետական Աթոռոյն զերանելի եպիսկոպոսն Հիփրեմ. վասն որոյ առանց ժամանակ անցընելու՝ իւր ծերունի հայրը տէր Մարկոս քահանայն փութով կ. Պօլիս խրիեցին Բ. Դռնէն հրաման հանելու ըստ բնաւորեալ ծիսի: Եւ այսպէս Աթանայու ժողովուրդը ընտրելով իւրենց սրբազան Գլուխը, պատուով կը տանին կը բաղմեցընեն Գրիգոր Մուսաբեկեանցի Աթոռը 1771 ին. զոր տան և երեք տարի մեծաւ տա-

ռապանօք և անբաւ վշտակրութեամբ
կառավարելէն ետքը, իւր հօրեղբօրը
նախորդ կաթողիկոսին նման առանց
օրհասի չարաշար կնքեց իւր տառա-
պեալ կեանքը, թունաւորուելով այ-
լազգի իշխանին ձեռօք յամի 1784 և
ի վերջն յուլիս ամսոյ :

Եփրեմ կաթողիկոս, ինչպէս կ'ե-
րեւի՝ առաջնորդութիւն վարած ժա-
մանակ Հալէպ քաղբին մէջ աշխա-
տասիրած է Յովինանու մեկնութիւնը
ի խնդրոց թէոդորոս վարդապետի ա-
ռաջնորդին Անտիոքայ, և 1769 ին լր-
րացուցած է : Իւր գրիչը թէպէտ և
չունի ոչ առաջին և ոչ երկրորդ գլ-
րականութեան դարուն փափկու-
թիւնը և քաղցրութիւնը և ոչ անոնց
ոճոյն քաջուր դարձուածքն ու ճա-
շակը, այսու ամենայնիւ համեմատե-
լով իւր դարուն մէջ գրաբառ լեզ-
ուին յեղափախութեան ժամանակի
հասարակ եղած խանդարեալ ոճոյն
հետ, կը դտնեմք ասոր մէջ դարձ-
եալ գէթ հետեւողութեան փոյթ մի
հարազատ հայկաբանութեան, ի բաց
առեալ քանի մի անսովոր մակդիրներն
ու բառերը :

Եփրեմ կաթողիկոս աւելի մեծ
ծառայութիւն մի եւս ըրած կ'ըլլար
թերեւս, եթէ իւր յաջող գրչաւ
եկեղեցւոյ համար ուստումնական աշ-
խատութիւնը զոհելէն յետոյ, իւր
ժամանակի քաղսփական և ազդոյին
անցքերն ալ ի գիր արձանացընէր,
և տոհմային պատմաւթեան վերայ քա-
նի մի թերթ աւելցընէր, որով ա-
ւելի արժողութիւն կ'ունենար իւր
վեհ ճակտէն թափածքրտինքը մարդ-
կութեան առջեւ, ինչպէս ունի մեծ
արժողութիւն իւր նախորդ կաթո-
ղիկոսին թափած արիւնը առաջի Աս-
ուծոյ :

Ոուրբ Կամիածնի ձեռագրաց ցան-

կին մէջ Եշէմ վարդապետի Ասեղոյ ան-
ուամբ 1231, 1232 համարով մեկնու-
թիւն Յովինանու ալ կը յիշուին,
զոր մեք գեռ տեսած չեմք, թերեւս
Յովինանու եղած ըլլայ :

Եհաւասիկ մեր քովն եղած Յով-
ինանու մեկնութեան յառաջաբանու-
թիւնը, զոր իբր Ճաշակ հոս մէջ կը
բարեմք մերազնեայ բանասիրաց հա-
մար :

ՅԱԽԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Եւ արդ՝ գրէ աստուածային Վ-
ռաքեալն առ հոգէծին զաւակն իւր
և առ մտերիմ աշակերտն Տիմոթէ-
ոս, « Ամենայն գիրք աստուածաշունչը
և օգտակարք՝ ի վարդապետութիւն
են և յանդիմանութիւն և յուղու-
թիւն և ի խրատ արդարութեան ո-
Որով խրատիմք ոչ երեկք դանդա-
ղել յուսումն սուրբ գրոց, այլ միշտ
յայնս պարապել, ցանդ վասն (նոցա)
տքնիլ, և հանապազ առ սեամս իմաս-
տութեան դեգերել : Եւ թէ որքան
օգտակար շահաբերութիւնս ծնանիլ
մեղ յընթեռնլոյ տեսանեմք, այնքաջ
ուշիմ վերծանողացն է յայտ : Կալ
քեզ ուրեմն զերկնուստ հրահանգ-
եալն, տես թէ որպիսի՞ եռաբորբոք
տենչիւ և տիր սոփակմամք գրէ առ
նոյն աշակերտն, « Յորժամգայցես,
ասէ, բերջիր զգիրսն, մանաւանդ
զմատեանս ո : Վրդ, զայս կոչէ մատ-
եանս, աղաչեմ, եթէ ոչ զաստուա-
ծաշունչն Յեսէր, զինա որ յէրու-
սաղէմէ սկսեալ մինչեւ ցլ իւրիկէ
լոզ եղեւ բանիւ քարոզութեան իւ-
րոյ, կարօտի գեռ ևս զսուրբ գիրս
և զմատեանս՝ որ է աստուածաշուն-
չըն, ընթեռնուլ, և նովաւ գրեթէ
յարաժամ զմայլիլ : Տինա թօթափել
և մեղ ճահ' է յանձնէ զհեղդութիւն

և զիսօթութիւն մտաց, և ըստ այնմ տարաղու վառել ի սէր Աստուածայնոցն, և բաղում ջանիւք յառաջանալ ի հրահանգութիւնս նոցա : Քանզի իմաստութիւն՝ ըստ ասելոյ ճեմականաց իշխանին, ոչ ընկողմանի ի փափուկ անկողնոջ, այլ ի դրունս խնդրողաց զնա գեգերի : Բայց այսու ամենայնիւ ոչ է տակաւին որ լլջացեալ ընդունուցու ի վիսասաբերքընց, այլ յուլացեալք կթեն անձանց իւրեանց զմահառիթն պառող, զբաղելով ի զբանանս կրից մարմնականաց, և խորդալովի քուն անհոգութեանց . և ոչ փոյթ յանձին կալեալ հոգեւորացն : Եւ մինչ այսպէս պանդոյր մը տօք աղամողեալք խելագարին, ի տիրական բարբառոյն կրեն կշուամբանս . “ Յննեցէք զգիրս ” : Արդ, զի՞նչ է քննել, եթէ ոչ պարապիլ ի ճաշակ քաղցրութեան հոգեւորականի ընթրեացն, որպէս ճաշակառուն խրախոյս բարձեալ զքաղցրութենէն վարդապետէ մեղ . “ Ճաշակեցէք, ասէ, և տեսէք զի քաղցր է տէր ” . և թէ “ Որպէս զի քաղցր են ի քիմ իմ բանք քո՝ քան զմեղը բերանոյ իմոյ ” : Եւ ո՛ մատակարար խահարառութենալի խորտկացս այսոցիկ, եթէ ոչ նա՝ որ համեղացոյց ի ճաշակելիս մոտաց եռաքառեակ դասուն : Որովհեմք կարողացուք դիել զիաթն բանի հոգեւոր ստեանցս, թարց աղաւաղելոյ զառաջիկայիս տեսութիւն՝ բարելաւութիւն հասուսցուք յանկ :

Բայց չորս հարկաւոր իբք պահանջին յայնցանէ՝ որք յայս գործ տաժանաւոր տառապանօք տենչան յեռնացեալ⁽¹⁾ : Աախ՝ որբութիւն սրտի և մաքրութիւն հոգւոյ, և այնպէս պարապիլ առ տեսութիւն աստ-

ուածային տառից . զի չէ պատշաճ զառածելոցն մեղօք ժպրհիլ ձեռներէց լինել առ հոգեւոր իրողութիւնս, զի մի լուիցեն զսպառնալիս, թէ “ ընդէր բնաւ պատմես զարդարութիւն իմ, կամ առնուս զուխտ իմ ի բերան քո ” : Եւ առ կայծակն ո՞ մատեաւ ունելեօք, արդեօք մեղաւո՞ր ոք և ստորերկրեայ . ոչ երբէք, այլ սերովէն՝ որ է բորբոքումն սիրոյ : Երկրորդ՝ պահանջի անդորրութիւն ժամանակի . զի որպէս ցրտութիւն անպտուղ առնէ զերկիր, նմանապէս և անանդորր ժամանակ արգել առիթ լինի հոգեւոր գործառնութեանց : Երբրորդ՝ պահանջի ապահովութիւն տեղւոջ, որպէս զի մեկուսացեալ յըզեաղմանց, ապա կարիցէ պարապիլ առ այնպիսի գործ մեծագոյն . քանզի հոգք աշխարհի հեղձուցանեն զլարհուրդն եւ առնեն անպըտուղ : Չորրորդ՝ առընթեր ունել դյուլովութիւն տառից, եւ այնպէս հմտանալ ամենայն մակացութեանց . զի ըստ փիլիսոփայից՝ ամենայն նուազեալ խնդրէ զկազդուրումն, և ամենայն տառապեալ կարօտի սատարութեան, որգոն՝ ծերք զգաւազան, և կաթնաբոյծ մանկունք զորմն : Օի սոքօքյաւէտ վայելչանան . որ և Պօղոս համեմատ բանիւք ստորագրէ, “ իբրեւ տղայոց, ասէ, ի Յրիատոս զկաթն ջամբեցի ” : Օնր կաթն, եթէ ոչ զուսումն վարդապետութեան : Համաձայնի նմին և առաքեալն Պետրոս՝ այսպէս ունելով բանին . “ Իբրեւ զրդիս ծնեալ անխարդախ կաթինն փափաքիցիմք ” : Օի որպէս հայելին հանդէպ աչաց եղեալ պարզագոյն ցուցանէ զամենայն, նմանապէս եւ աստուածային տառքն՝ զօրէն հայելւոյ լուսաւորագոյն առնեն զմիտս մերըստ առաքելոյն . “ Այժմ ընդ հայելի

(1) Գուցէ ձեռնարկել:

օրինակաւ տեսանեմք զնա , այլ յայն ժամ դէմ յանդիման ։ Որոյ յարացոց և օրինակ էր լուացարան խորանին (1) որ ունէր հայելի յարտաքս . ընդ որս հայեցեալ զանմաքրութիւնս իւրեանց տեսանէին , և ապա ինեքքս մտեալ լուանիլ փութային : Հանգունաքար և սուրբ գիրք որպէս հայելի զմեղացն ցուցանեն զանմաքրութիւնս և յորդորեն մաքրել ի մեղաց : Օրինօքն է գիտութիւն մեղաց ։ ասէ որ Յրիստոսիւն խօսէր Պօղոս : Եւ Ոսկէբերանն համաձայն բարբառի . “ Օ , ի ուր օրէնք ոչ , ուստի ռամէ կացն բարեղարդութիւն ։ Ասէ եւ Արիստոտէլ . “ Լողութիւնն և ականջն է զգայութիւն մակացութեն ։ Որով յայտ է թէ օրինացն գիտութիւն գրովք սրբովք աւանդեցաւ մեղ , որոյ զօգտաբերութենէն լինելով առակավեպն իրազեկ՝ ասաց . “ Իմաստութիւն բարի տայ զշնորհս , և ճանաչել զօրէնս մտաց բարեաց էն . և թէ “ օրէնք իմաստնոց աղբիւր կենաց . իսկ անմիտն ընդ որոգայթիւն մեռցին : Եռակցէ սմին և սուրբն Եպիփան . “ Վեծ խորխորատ մթին է և խոր խաւարասոյզ՝ անգիտութիւն սուրբ գրոցն բանից ։ Եւ դարձեալ “ Լքումն կենաց է , ասէ , և կորուստ՝ անգիտութիւն սուրբ գրոց ։ Որին վասն կանխեցաք առընթեր ունել զյուլութիւն տառից , որով զարդացեալ ի յարբունս հասակի գիտութեան հասանել կարացեն , եւ այնպէս ի կառս բանի աշտանակեսցեն : “ Որ գնայ ի տունըեան՝ ոչ դայթակղին , տասց Տէրն . յայտ է որ պատշաճն ի խաւարէ անգիտութեան վրիպին . Յայսոսիկ հայեցեալ տասց . “ Ճրադ են բանքքո ոտից իմոց , եւ

ըսյ տան շաւզաց իմոց ։ իբրու այն զոր ասաց Պղիտաբըս . “ Որպէս օտարք և պանդուխոք ի ճանապարհի , նոյն իսկ և անխրատ մնացեալքն ի գրոց՝ ի յիրաց իւրեանց արտուղին և մոլորին հանապազութային ։ Առաջուն փետրաթափիկ կարէ թեւապարել ի վերայ օդոց , աղբ ասա ինձ . եթէ նոքա այնպէս , ապա և մեղ անմարթէ թարց ստանալց զերկուս թեւս , այսինքն՝ զգործնական և զոնսական գիտութեան , թեւ ածելաւ այսպիսի բարձրագոյն տեսութիւն : Օ , ի տիրապէս այնոցիկ է այս գործ , որք կարշնեղացեալ են ամենայն մակացութեամբ . և այնպէս վատահութիւն առեալ հանգիսացին հետազօտել զառակս իմաստից և զձառս նոցին : Իայց առ մեղ ի յեռակի նախասացեալ կարեւոր եւ պիտանացու պատճառացն և ոչ մի ինչ գտանի առձեռն պատրաստ , այլ մանաւանդ նորին հակառակօքն լցեալ : Կախ՝ զառաջինն ի յառաջին տիրոց կորուսաք : Յար և նման և զերկրորդն բաղմավրդով մեր , յորում հողմց խորշակի և տապախառնի զիորձ առաք . և անկաւ ըշգլխով մեր արեւ կիզանող զանազան վտանգի ի զանազան կողմանց իբր ի յականց բղլսեալ . յորում ամի սկսաւ և գոռ աղմկի ի մէջ ինքնակալ կոյսեր սարակինսաց և հեղգաղարհուր աղգին Վասկովոց . որպէս զմարենին ի մէջ հրոյ պահեացէ Վաստած զոզգո Նայոց : Վամանապէս և երրորդն , զի փախանակ ապահովալ տեղւոջ իբր ի կամառոր գիտահոջ բազում տառ տարանօք կոչկոճիմք անդուլ վարանմամբ : Եւ մինչ յայսցանէ յայսնապէս զըրկեցաք , հապա ի չորրորդն դիմեացաք վտագին անձամբ . զի գէթ հոգէս իմառնութիւն առեալ ի հոգէկիր

Հարցն՝ դէպ ուղիղ յառաջասցուք յընթացս բանից :

Եւ արդ՝ այսուհետեւ, եղբայր իմ թէոդորոս րաբունապետ, փութասցուք ընուլ զայս իմաստ աստուածաւ յին բղձից քոց, գուղնաքեայ և դաղշաչելի⁽¹⁾ բանիւք. ոչ եթէ սեթեւ եթեալ բազմաբանդակ մանուածովք պերձացուցուք, և ոչ գեղջուկ բանիւք աղաւաղեցուք. այլ յերկաքանչիւրոցն զանդիտեալ հեռասցուք ի ծայրայեղ խոտորմանց զարգունականն ընարելով պրոլուայ: Եւ ոչ գարձեալ ի լուսւթեան պատճառաց իբր յանդգնելոց աշառութեամբ երկուցեալք կասեցուք ի բարեգոյն յօժարութեան. այլ պարսաքարեցուք զնոսա բանիւ մարդարէին, որ անօրինելոցն է՝ ասացուք՝ անօրինեցի, եւ որ բարկանալոցն է՝ բարկասցի, վառեալ նախանձու և ատելութք: Ապա սրբոյն բանք յառաջասցին մեզ, որք են հանդիսադիրք նորահրաշք և արբանեակը երանաւէտ կենացն, որպէս զթիրախ արձանասցին հանդէպ աչաց մերոց, և որպէս զճրագ առաջի ընթացին մեր՝ ոչ խոտորել յաջ և յահեակ: Եւ խորշեցուք ի լեզուագարացն աւելութանութեանց, որպէս ի մահանուէր կերակրոց. և վարկեցուք զբանս նոյս իբր զհնչմունս հողմոց, և իբրեւ զլողանջմունս գորտաց: Ա անզի ասսուածային տառքն են որպէս զմարմին շուրջ պատեալ զոդւով, և որք ի կեղեւս բանից յապիցեն զաշն՝ զինչ անտի կթեցեն, յայտ է զդառնութիւնս, ըստ կապկաց գտեալ զընկցն ընդ կեղեւոյն դառն, յետս խուսին անդիտանալով զքաղցրութենէն որ ի ներքս • Ապա զայնոսիկ որք լուսագար-

եալք տեսութեամբ մոտաց ի լսելիս մարմանջեալք խաթարել զմիտս սէր գրոց գեգերին, թողցուք յիրաւանց ժամադրեալ տեղին դատել, և մեքոր առաջի կայ մեր՝ գիմեսցուք: Որ և մեծ գթութիւնն և անձառ սէրն Վատուեցոյ կարողացուցէ զմեղ հասուցանել յանկ զտեսութիւն մարդարէութեանն Յովիանու, որ յարեաւ յաւուրս Աքազու, և ըստ ումանց՝ յաւուրս Ողիայ և Յովիաթանու:

Բայց զգաստութիւն ոչ փոքր պիտոյ է մեղ, այլ բազում և յոյժ առաւելցանդ գեգերմամբ և ներկայ աշխատելի քրտամբ, և ընթեռնուլն եւս մտաւորաբար, որով անվաւեր և անստգիւտ լիցի, և մի տարտամանձին իմոյ եսլերանք: Եւ ամին ոչ բաւելով հիւծեալս վերջին աղբատութեամբ մտաց, ի գործակցութիւն տկարութեան իմոյ՝ կարօտիմ սուրբ Նոդւոյն ի թիկունս հասանել, ըստ օրինակին որ ի Մավսէս բնակելով զեօթանասուն ծերսն ըստ բաւականին ելից, և Եղիաս կրկին պարզեւօք փայլեցաւ. որով ըստ պատշաճին կարասցուք տողել զքանս, և մի յանձին զօրութիւն վատահացեալ խիզախիցիմբ և աղաւաղելի զտեսութիւն սորա արասցեմբ: Այլ նովաւզսորս անդնդոց իմաստից խուզել մարթացուք և բարւոք վերծանութեամբ հետազօտել կարասցուք, զիմի յառաջարն սերմանելով լիցի զուրացիւատանքն մեր և ընդունայն վատակքն: Այլ նախ զկրթութիւնն հոգւով զօրացեալ ի բաց ապաշաւեցուք, և ապա յանմալորութիւն սորա յառաջասցուք. և ո՞ արժանապէս կարասցէ իմանալ զիմաստս հոգւոյն, եթէ ոչ աստուածային հոգւովն, որպէս Եղիկիէլիւ վատահա-

(1) Ա. յատէս օրինակին մէջ մերեւս դահբաւել:

բար զմեզ. «Ահաւասիկ ես ածեմ ի վերայ ձեր շունչ կենդանի, և տաց զոդի իմ ի ձեզու Ուրեմն չէ յանկաւոր վայրագասուն մտօք և հունաւոր սահմանացն իբր մարդկային ու շմութեամբ ղաստուածային իմաստքնել. զգաստութիւն ոչ փոքր պիտոյ է մեզ որպէս և ասացաք: Օ ի չէ ահաւոր վարկարազի անցանելընդ բանս նոցա. և չէ դէպ փոքր համարիլ զզօրութիւն իմաստիցն որ ի նոսա. այլ մտացն թեւօք թռուցեալ վերաբերին առաջնորդականին մերոյ բացատրել զառ. ի նոցանէն ասացեան: Ի՞եր այսուհետեւ ինոսին ի բանս մարդարէին երթիցուք որ ասէ:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՃԵՐՄԱԿ ՓԻԴԸ

ՓՂԱՊԱՀԱՐԱՐՈՒԵԱՆ ՃԱԳՈՒՅԸ. — ՃԵՐՄԱԿԻ ԴԻՆ
ՔՆԱՊՈՂ ՀՆԱՐԱԳԻԿ ԿԱՅԸ. — ԿՐԱՊԱԽԱՅԻ ԱԼՎԱՆ:

Ի իրմանիայի փիղերը աշխարհիս ամեն փիղերէն գեղեցկագոյններն են. և գերազանց քան զանդկաստանին, Պէնկալային, Ոչյլան կղզւոյն ու Ոիսմին: Ոակայն այս ետքի երկիրներուն մէջ աւելի մեծ կարեւորութիւն ունին փիղերը ճամբորդութեանց դրժուարութեանը համար: Փիղերուն առաջին ծագումը շատ բարակ քննութիւններով իմացուած է Ոանտալէյ քալքին մէջ ըլլալը: Ճերմակ փղին վրայօք շատ առասպելներ հնարուած են. այնքան որ մեծ զգուշութիւններ պէտք կ'ըլլայ անոնց վրայօք ճըշմարիտ տեղեկութիւն հազորդել ու զողներուն:

Ա.

Պուտոտութիւնը⁽¹⁾, Ոմարտանայից կամ

(1) Le bouddhisme,

Անդուժովականաց կրօնը, Հնդկասիական ցամաքի և իւր բազմաթիւ արշիպեղագոսներուն մեծագոյն մասին մէջ տարածուած է: Առանց շափազնցութեան եղած հաշիւներուն այլ յելով Պուտոտական աղանդաւորաց թիւը երկու միլիոնի կը հասնի. այլ եւ Զինու և Քոչինչինոցի մէջ ալ ունի պաշտողներ կան:

Պրահմանութեան վերայ պատուաստեալ անոր մէկ վերանորոգեալ ձիւղը կը համարի Պուտոտութեան և շատ աղանդներուն կը բաժնուի: Ո՞ւր միտքը հոս այս զանազան աղանդաց, այսինքն լամաներուն, Դաւափոններուն, Ուահաններուն, Փօօնկիններուն և Պոնցերուն մէջ եղած հեռաւոր տարբերութիւնները հաստատել չէ. այլ կ'ուղեմք միմիայն մեր առարկային վերաբերեալ վարդապետական կէտերը նշանակել հոս:

Ի՞ոլը Պուտոտականաց հասարակ եղած մէկ կարծեաց համեմատ, տիրող Իմացականութիւնը, Իանն վերացեալ և բացարձակ, նախսկին ՊՈՒՏՏԱՆ, նախսպոյակն էութեամբ, կ'ըգբաղի միշտ դէպ ի կատարելութիւն տանիլ զմարդկութիւնը: Այս վախճանիս համար կը մարմնանայ, որուեալ միջոցներու մէջ, իմաստնոց կերպարանքն առնելով, որոնց պաշտօնն է բարւոցն կիրառութիւնը մարդոց սորվեցընել: Այս առաքեալները որ Պուտոտ ալ կը կոչուին, համարին իբր նախասահմաննեալք և մասունք աստուածային տարեր: Աստուածութեան մասնական յայտնութիւնները դեռ շրջան մի կատարելու միջոցի մէջ պիտի շարունակուին և այս շրջանը ցորչափ տեւեէ, աղանդները իրարմէ պիտի զանազանին. — ոմանք այս շրջանը հինգ տարի, և ոմանք միլիոնաւոր տարիներ պիտի տեւեէ կ'ըսեն. — յեւ

որոյ Պուտտան, որ է նոյն ինքն Յայտ-
նութիւնը՝ պիտի բանաց բնական եր-
ջանկութիւնը, բարոյական կատարե-
լութիւնը, յաւիտենական հանգիս-
տը սահմանող թուականը, այսինքն
այնպիսի կեցութիւն մի որ գրեթէ
աննիւթական պիտի ըլլաց, և միմիայն
տեսական կեանք մի՝ ազատ մարդկա-
յին բնութեան պահանջած պիտոցք-
ներէն :

Աւրիշ վարդապետութիւն մի ևս
կայ որ ընդհանրապէս ընդունուած
է Պուտոտականներէն, այսինքն է հո-
գէփոխութիւնը, որ ուրիշ բան չէ՝
եթէ ոչ կարդ մի գոյափոխութիւն-
ներու որ իւրաքանչիւր կենդանի է-
ակներու մահուան ժամանակ կը պա-
տահին : Այս կերպով՝ կենաց սկիզ-
բը յաջորդաբար մարդէ մի անասնոյ,
թռչնոյ, չորքոտանւոյ, ձկան, թի-
թեռնիկի և ուրիշ որ և է կենդանւոյ
մի կ'անցնի, եւ անդրադարձօրէն :
Այս անասնոց մէջ փիզը ամենէն. զօ-
րաւորին ու ամենէն աւելի իմացակա-
նութիւն ունեցողն ըլլալով, Պուտ-
տաեանք կը հետեւցընեն՝ որ մահ-
կանացուաց մէջ անոնք որ իրենց ա-
ռաքինութեամբը յատուկ չնորհքի
մի արժանաւոր են, ուրիշ կերպ չեն
կընար ընել, եթէ ոչ պարտաւորիչ
գոյափոխութեան սկզբունքին հետե-
ւելու համար ձերմակ փղի մի մար-
մինը ընտրել իրենց : Այս եղանակաւ-
նոյն իսկ ձերմակ փիզը տեսակ մի
Պուտտա եղած կ'ըլլայ, որ գերա-
գոյն Պուտտային մէկ մասն է : Այն
երջանկայիշատակ համարուած թանձ-
րամորթ կենդանին մեռնելուն Պուտ-
տա կրկին կը յայտնէ զինքը՝ մարդկա-
յին կերպարանքը դարձեալ վերան
առնելով : Հետեւապէս երբ մէկը
իւր քով ձերմակ փիզ մի ունի, ապա-
հով է որ քիչ ժամանակէն Պուտտա

մի սլիտի ունենայ . . . : Ի՞նչ երջանե-
կութիւն :

Եհաւասիկ այս բնաբանիս վերայ
հիւսոււած են տեսակ տեսակ առաս-
պելներ :

6

Ճերմակ փիղը բացառութիւն մի
և պատահում մի է , և ոչ թէ տեսա-
կի մի տարբերութիւն . և այս բա-
ցառութեան հազուագիւտ ըլլալն է
որ նշանաւոր ըրած է իւր գոյնը : Ոի-
ամի թագաւորը հինգ հատ միայն
Ճերմակ փիղունի . իսկ Քիրմանի կայս-
րը մի միայն . և այս ընական պատ-
մութեան հրեշաւոր օրինակը այնքան
ծերացեալ է այսօր , որ շատ չտեւեր
պիտի աւանդէ իւր Պուտուային հո-
գին :

Եկրմանիոյ արքունեաց մէջ այս
օրուան պաշտուած ձերմակ փիղը
վաթսուն տարիէն աւելի է որ չաստ-
ուածոց կարգ անցած է : Աւնի յա-
տուկ իրեն սահմանուած երկիր իբր
եկամուտ , ինչպէս սովորութիւն է
արքայազուն իշխանի մի : Իւր եկա-
մուից հոգաբարձութիւնը տեսակ մի
փոքրոտն պաշտօնէից յանձնուած է :
Կայսերութեան աթոռը յաջորդաբար
Դ'սակայինէն Ավա , Ավայէն Ամրա-
բուրա , Ամրաբուրայէն Անտալէյ
փոխադրուելով , ուր որ հիմակ կը
գտնուի , ամեն մէկ տեղ փոխուելուն
փղին համար ալ յատուկ պալատ շին-
ուած էն :

Ճերմակ փիղը մայրաքաղաքէ ի
զատուրիշտեղ չկրնար բնակիլ։ Գըլ
խաւորութեան (1) նշանակէ, թէ կը-
քօնական, թէ քաղաքական և թէ զին-
ուորական։ Կայսրէն ի զատ՝ որու-
միայն կը վերաբերի կենդանին իրա-
ւամբք, ուրիշ մարդ չկրնար հոեն սե-

փականել անոր ստացումը : Եթէ ձերմակ փիզը իրեն յաջորդ մի գեռ չգանուած մեռնելու ըլլայ , կայսերական տունը աղետալի չարեաց մէջ կ'ինկնի և երկիրը որ և է պատժոյ զոհ կ'ըլլայ . ինչպէս մահտարաժամի , սովու , հեղեղմօնքներու , երկրաշարժի : Ա ասն որոյ ամեն պաշտօնէից հրաման արուած է առանց բացառութեան , որ անմիջապէս պէտք եղած տեղը լուր տան , երբ փղին կենացը վերայօք ամենափոքրիկ տկարութեան նշան մի ականջնին հասնելու ըլլայ : Եւ ելորդ է ըսել թէ այսպիսի գէպի մի ժամանակ պաշտօնական կերպիւ փոյթ ու նախանձ ցոյց տուող պաշտօնէին ինչ մեծ վարձատրութիւններ կ'ըլլան : Երջանիկ է նաև այն անձը որ կըյաջողի ձեռք ձգել ձերմակ փիզ մի ապագայ հարկաւորութեան համար . ալ ուրիշ բան չը մտածեր նա . իւր երջանկութիւնը կատարեալ է :

Քսան տարիէն քիչ մի աւելի կայ ներկայ կայսեր նախորդը իւր երկիր ներուն մէջ բարեյաջողութիւնը հաստատ պահել տալու խիստ մեծ ջանք ընելով , այն միջոցին որ սովը գրեթէ տիրած էր և տուրբը չափաղանց ծանրացած էին ժողովրդոց վերայ , առանձնախօսութեանը մէջ գրեթէ սակերպ զրուցած էր . “ Յագաւորի մի առաջին պարտքն է տէրութեան առողջութեանը վերայ հսկել . իսկ իւր անձնական կենաց պահպանութիւնը՝ երկրորդ պէտք է լինի : ” զէկ է նաև միտքերը միշտ զբաղմանց մէջ պահել ու հաւատըք ատեն ատեն նորոգել այն վեմ արարողութեանց մէկ տեսարանը ներկայացընելով , որու պաշտաման հանդէսը աչքերէն աւելի մոքին ու սրտին կ'ազդէ : Իմ ժողովուրդս ձանձրանալու վերայ է : Ոչ

պատերազմ կոյ , ոչ քոլերա , ոչ հըրդեհ և ոչ պղտի խոռովութիւն մի : Եւ յանդարտութեան վիճակը մարդը կը յուսահատեցընէ : Վ՞նչպէս ընեմ որ այս բարեմիտ ժողովուրդը գործով զբաղեցընէմ : Աւ յանի վանքը ուր կը բնակեր երբեմն վսեմափոյլ տէր կոտաման , դեսպան մի խրկեմ , որ անոր Գերապայծառէն ընդունի այն միակ ակռան որ սոյն սրբազնն կոտամանին ըլլալը վաւերական կերպիւ ձանցուած է . բայց գժբաղդաբար , կ'ըսեն , թէ այս սուրբ մասանց գինը չափաղանց բարձրացած է : Եւ յս բանը վեաս չէ մի : Վ՞նչ գեղեցիկ արարողութիւն մի ունեցած պիտի ըլլայինք անով : Բոլոր տէրութեանս մէջնէն մեծ թափօրով կ'անցնէր այն սը մասանց տապանակը . ժողովուրդը հանդէսը տեսնելու համար Երրառատի եղերքները խուռն բազմութեամբ կրդիմէին : Բայց որովհետեւ մեր եկամուից վիճակը չներեր մեր սիրելի ժողովրդին այսպիսի հանդէս մի ցոյց տալ , ուստի ուրիշ տեղ դարձրնենք մեր ուշը : Եւ որովհետեւ իմ խելքս առած է այս խորհուրդս , ուստի ուրիշ մէկ աւելի յաջող ժամանակ կը խորհինք ասոր վերան :

“ Եխ , այն մեր պատուելի Ս'հէնկ Մհկէնկը (ձերմակ փղին պատուանունն է) , սկսած է ծերտնալ . ամեն օր վատառողջ է , զաւակ մի ալ չունի , և ունենալու եւս բնաւ յցս չը կայ . և որքան ալ ջանացինք , չկրցինք իրեն յաջորդ մի գտնել : Եխ , ասիկայ գէշ գուշակութիւն մի է : Երդեօք փորձանքը մե՞ր գլխուն պիտի գայ՝ թէ մեր պետութեան կամ կայսերութեան : Փօօնկիյերուն ջանքը , մարանայիշ չերմեռանդ բարեպաշտութիւնը երկիւղ կու տան ինձ , որ ըրլայ թէ թշնամիներս այս պարագաւ

յէն օգուտ քաղելով ժողովուրդս յա-
պըստամբութիւն գրգուեն : Օյանը կը
թուի ինձ այս քանը , և վերան մտա-
ծել խիստ կարեւոր է : || Երեմն տէ-
րութեանս խորհրդականներուն հետ
խորհրդակցիմ :

Չայն տուաւ տէրութեան պաշ-
տոնէից և խորհրդականաց և կրօնա-
կան գլխաւոր աստիճանաւորաց , մէկ
խօսքով՝ Հուլօ—Տաւհի⁽¹⁾ բոլոր ան-
դամներուն :

Ասոնց մէջ , կ'ըսէ պատմիչը , մէկն
աւ կար , որոյ ինչ պաշտօն ունենալը
միտքս չգար , անունն էր Մագ—Գալ-
տէր , ու ինքն էր իառնածին այսինքն
հայ և փորթուկէզ ծնողացմէ ծնած⁽²⁾
ու բուն Շիրմանացի : || Երիշ անգամ
ներ մեծ ու կարեւոր պաշտօններ
յանձնուած էր իրեն , և ամեն ան-
դամ ալ որ և է պատճառաւ մի եւ-
րես պարզած չէ , բայց և այնպէս բո-
լորովին ալ երեսէ ինկած չէր . քանի
մի ծնրադրութիւններ ընելով՝ իւղի
պէս ջրին երեսը կ'ելնէր միշտ :

Հնդկաստանի բնիկ լեզուներէն ի
զատ կը խօսէր նաեւ հայոց , անգին-
ացւոց , փորթուկէզներուն , մաղա-
յեցւոց , շինաց ու բալնի լեզուով ,
որ այն երկիրներուն խորհրդաւոր լե-
զուն է : || Երիտասարդութեանը ժա-
մանակ առուտուրներու մէջ գտնը-
լած է ի Մալաքքա , Անկափուր ,
Փուլօ—Փինանկ , Պանկըուք , Դալօ-
յի , Մարդապան , Աքիապ , Զիր-
դակօնկ , Կալկադա , Մադրաս ու Գո-
լոմալոս : Կայսերութեան պալատին
մէջ եղած այն անհամար և սոտակ մի
չարժող կահ կարասիները բոլոր իւր
ձեռօքը ծախու առնուած են : || Պան-
կունի նաւահանգստին տեսուչն էր

կամ մաքսապետը , որ կայսերութեան
ամենէն բանուկ մէկ տեղն էր երբ
1826 ին անգղիացիք տիրեցին այն քաղ-
քին :

Ի՞քը նշանաւոր ու ակնածական
կերպարանք ունէր , ինչպէս շատ կը
գտնուին փորթուկէզի ցեղէ եղող
մարդոց վերայ⁽¹⁾ , ու շարժմունքնե-
րը ազնիւ են : || իշտ սեւ զգեստներ
կը հագնէր , և շապկին ձերմկութիւ-
նը սեւագոյն հագուստին հետ միա-
տեղ իւր ձիթագոյն դէմքը դուրս կը
ցափեցընէր : Կայուածքը խոր ու
մանրանկատ : Եւր դէմքէն թէպէտ
և անկարեկիր կ'երեւար ու միշտ մը-
տածող ու գրեթէ հանդարտ ձգնաղ-
գեաց մի , սակայն իւր ներսի դին
վառվուուն ու կրգոտ հոգի մի թա-
գուն կը կըէր :

Լօթն անգամ աշխարհ մտած է .
մէկ հայուհի , մէկ փորթուկէզ եւ
հինգ բիրմանուհիներ ունեցած է . ո-
րոնցմէ ծնած քսան զաւկըներէն մէկ
քանին իրենց մայրերնուն ազգակա-
նացը քով սնած մեծցած են : || յս
տեղեկութիները տուող անձը 1859ին
տեսած է զինքը , որ այն ժամանակ
70 տարեկան է եղեր , բայց տեսնողը
զինքը 50 տարեկան կը կարծէր , այն
քան առոյգ , զուարթ և իւր գործ-
քերուն մէջ արի էր :

Ի յաջուրն :

Ա.Օ.Դ.Յ.Յ.Բ.

Ապրիլ 24ին յաւուր տօնի Ա-
րեւման խաչին Արքազան Պատրիարք
Հայոց եօթը սարկաւագաց քահա-

(1) Կայսերական մեծ խորհրդարանի անունն է :

(2) Վարը տուած պարագայներէն կը հասկըցուի
որ հայրը հայ ու մայրը փորթուկէզ :

(1) Գրողը եթէ հայոց ազգը ձանշալու ըլլար ,
ուեկը հայոց կընծայէր սայն բնական ձիբերը քան
թէ փորթուկէզից :

Նայութեան եւ վարդապետութեան աստիճան շնորհեց սուրբ Յակովեանց տաճարին մէջ ի ներկայութեան ժողովոդոց . ուր ներկայ էին նաեւ Աթէնքի տէրութե մեծապատիւ հիւպատոսը , քանի մի յօյն կարդաւորք և

իրենց մեծ ուսումնարանին գլխաւոր գասատուն : Արարողութիւնը խիստ փառաւոր էր և ինքը Արքազան Պատրիարք Հայոն էր Ժամարար : Խոկյիշեալ եօմն սարկաւագունք հետեւ եալներն են .

Սարկաւագ Վարտիրոս Վալզարացի , որ կոչեցաւ տէր Վարդան :

” Գրիգոր Արզնկացի ,	” տէր Վկրտիչ :
” Պօղոս Վանեցի ,	” տէր Ուեսրով :
” Խաչատուր Ամրեկացի ,	” տէր Թաղմա :
” Գրիգոր Արագիերցի ,	” տէր Թաղեկոս :
” Խաչատուր Վալաթիացի ,	” տէր Վարդողլիմէոս :
” Ուափայէլ Պօլսեցի ,	” տէր Վատթէոս :

— Ժառանգաւորաց Դպրոցին համար կարինէն խրկուած և ընդունուած աշակերտացուի վկայութեան գիրը , զոր տուած է ըստ սովորութեան Ա. Աթոռոյս յարդոց բժիշկը , կը փութամք հրատարակել :

ԹԻՒ 11.

Ամենապատիւ Արքազան Հայր :

Պատ հրամանի Չեր բարձր Արքազնութեան և ըստ կանոնի Աթոռոյս Կարնեցի Արշակ Յովլասափեան Ժառանգաւորաց Դպրոցի աշակերտացու նորեկ պատանին ըստ բժշկականութեան քննելով՝ կատարեալ առողջ վիճակի մէջ գտայ . ամենեւին ժառանգական և ստացական ախտ և բնական պակառութիւն մը չունենալուն վկայելով կատորագրեմ :

1866 Ապրիլ 17.

Գ. Ա. ԵՏՏԻ

Ի Առ-Է՛ Երուսաղէմ :

Ս. ՏԵՊէՃԵԱՆ

ՈՒՄՈՒՄՆԵԿԱՆ

ՀԱՐՑՄՈՒՄՔ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆՔ

Յուրաքանութեան կամ համարադական գիտութեան մէջ խիստ ան-

ուանի եղած է իւր դարուն նկատմամբ՝ Անանիա վարդապետը Վիրակացի , որ իններորդ դարուն մէջ ծաղկեցաւ . և այս գիտութիւնս սորվեցաւ ի Տրապիզոն Տիւքիկոս յօյն հրաշակաւոր թուագէտին քով : Անանիա երբ զարմանալի կերպով մի յառաջացաւ համարողական ուսման մէջ , սկսաւ իւր ընտիր տաղանդները գեղեցիկ երկասիրութիւններով ծանօթացընելազին՝ յօրինելով Յաղագւելինի կոչուած աստեղագիտական գիրքը . Յաղագւ լուրջ և կը անունով համառօտ ծանօթութիւն մի Աստուածաշունչ գրոց մէջ յիշուած եւ Հըկից ժամանակ գործածուած չափերուն և կշխքներուն վերայ : Բացի այս աշխատառութիւններէն եւ վարդապետական ձառերէն՝ որոնց վերայօք չէ մեր խօսքը , ունի ուրիշ մանր գրուածքներ եւս համարողութեան վերաբերեալ , Յաղագւ կապարձոն համարութեան և կերպից հարցման անունով , որոնք անշուշտ ազգին նորահասակ տղոց գրգիռ մի տալու համար նոյն գիտութեան հետեւելու , զուարձալի հարցման քններով զանազան օրինակներ մէջ կը բերէ՝ թողլով անոնց լուծումը իւրաքանչիւր կարդացողին : Անկան եւս սոյն նպատակաւ՝ ազգա-

յին դպրոցներու համարողութեան դասու աշակերտաց ճաշակնին գըրգուելու դիտմամբ՝ նոյն գիտնական վարդապետին հարցմունքները Հանդէս սիս միջոցաւ կ'առաջարկեմք, անփոփոխ պահելով իւր գրիչը, որ միան գամայն կրնայ օրինակ լինել պարզ և մաքուր հայկաբանութեան։

Հարցում Ա.

Այսպէս լուայ ի հօրէն իմմէ, Եթէ ի ժամանակի պատերազմացն Հայոց ընդ Պարսս, սաստիկ քաջութիւնքնին իլամսարականէն Օաւրակայ, որպէս թէ ամսօրեայ աւուրբք երիցս յարձակեալ ի վերայ զօրացն Պարսից։ Եւ հարկանէր յառաջնումն զիկս զօրուն. եւ ի հետ մտեալ հարկանէր յերկրորդումն ըզչորրորդ մասն զօրուն. եւ յերրորդումն՝ զմետասաներորդն. և մնացեալքն անկանէին փախստեայ ի՞նչ, ախճաւան՝ թուով երկերիւր ութսուն։ Արդ, պարտիմք և մեք իմանալ մնացելովքն, եթէ յառաջ քան զկոտորումն ո՞րչափ էին։

Հարցում Բ.

Այր մի յիմօց մերձաւորաց գումարտ լեալ ի Իահէլ, եղիտ մարդարիտ շահաւոր. և դարձեալ ի տուն և հասեալ ի Գանձակ, վաճառեաց զհասարակ մարդարտին զհատն յիսուն դրամ։ Եւ եկեալ ի Վախճաւան, վաճառեաց զչորեւոր (զօրըրորդ) մասն մարդարտին՝ յեւթանասուն դրամ զհատն։ Եւ հասեալ ի Դուին, վաճառեաց զերկոտասաներորդ մասն մարդարտին զհատն յիսուն դրամ։ Եւ մինչ ի Ծիրակ առ մեզ եկն, և ունէր մնացեալ մարդարիտսո հատո քառն և չորս։ Արդ գիտեա մնացելովքն, թէ ամենայն քանի մարդարտին է, և կամ քանի դըրամ գինք մարդարտին։

ԸՆԴՀԱԿ

ՈՒԵՏ Ա. Բագա-որի հակելիմ էմս և ոչ պատնշանի։

Թագաւորին մէ կը սեղանը կերակուր կերած ժամանակ սովորութիւն ունէր որ իւր մտերիմ խորհրդականներն ալ չորս կողմը նստած կը խօսակցէին։ Օր մի երբ պատնշանէ (փաթլիճան) կերակուր բերին, թագաւորը պատառ մի անկէ ուտելով սկսաւ գովել՝ ու ըսել թէ ի՞նչ աղնիւ կերակուր է։ Մտերիմներն ալ պատասխաննեցին, այս աէր թագաւոր, պատնշանը աղնիւ բան մի է և ընտիր կերակուրը կ'ըլլայ, և մարդոյս շատ օգտակար է։ Միջոցը քանի մի օր անցաւ, դարձեալ ճաշուժամանակ պատնշանէ կերակուր բերին սեղան։ Թագաւորը պատառ մի առնելով սկսաւ երեսը թթուեցընելով ըսել, թէ այս ի՞նչ գարշելի կերակուր է, ամենեւին սիրած չեմ։ Իւր մտերիմներն ալ իրեն հետ սկսան պարսաւել զայն ու ըսել՝ թէ ամենեւին կերակուր ըսելու տեղ մի չունի, և թէ անհամ ու մարդոյս ինասակար կերակուր է։ Թագաւորը զարմանալով դարձաւ ըսաւ. ի՞նչ զարմանալի մարդիկ էք դուք. անցեալ օր ես գովելուս՝ դուք ալ հետս գովեցիք, ու հիմայ որ պարսաւեցի, դուք ալ կը պարսաւէք, վնասակար է կ'ըսէք, դուք ի՞նչպէս մարդիկ էք, որ ամենեւին անկեղծութիւն ու մտերմութիւն չեք ցուցըներ։ Ասոր վերայ դարձան ու ըսին թագաւորին։ Տէր արքայ, մենք պատնշանի մտերիմ չեմք, այլ թագաւորի մտերիմ եմք։ Այս պատասխանը թագաւորին ծիծաղը շարժեց։

Այս տեսակ մտերիմներ անպակաս են աշխարհիս մէջ, որոնք մարդոյս A.R.A.R. @

գործքերը կամ անոնց աշխատասիրութիւնները կը գովեն, չէ թէ անոնց ըստ ինքեան գովելի ըլլալնուն, այլ միայն ի շնորհս անոնց տիրոջը և աշխատասիրողին որուն մտերմութիւն կ'ուզեն ցուցընել իրենց շահուն համար, և ոչ ուրիշ դիտմամբ :

ԵՅԼ ԵՒ ԵՅԼ Ք

Հաղուարեպ Դադաստան թ.՝ Կարուի պատժապարտութեան ատենին առջեւ մօտերս տարօրինակ փուրսիշ մի պատահեցաւ : Խնդիրը մարդասպանութեան վերայ էր, զոր թումազօ ֆուսդօ անուն 67 տարեկան անձ մի ի գործ դրած էր ասկէ իբր 45 տարի առաջ, երբ հազիւ 22 տարուան կար ինքը : Այս յանցանքը վերահաս քաղաքական յեղափոխութեց և ուրիշ մասնաւոր պարագայից պատճառաւ երկար ժամանակ առանց դատի մնացած էր, և յետոյ ալ ուրիշ տարագէպ պատճառներով պատիմը չէր ընդունած : Ա երջապէս մօտ օրերս ուրիշ յանցանքով մի ամբաստանուելով՝ ճանցուեցաւ, և պատժապարտութեան ատենին ներկայացնեցաւ ասկէ իբր կէս դար առաջ գործած եղեռնագործութեանը համար : Ինթերցողք կրնան իրենց աչքին դիմաց բերել ատենին կերպարանքը . վկաներուն շատը մեռած էին . իսկ եկող երեւցողները քամակնին կորացած ու իրենք կծկած կը ըլնձմտած ու օտքերնուն մէկը փոսին մէջ ինկած մարդիկ էին : Ապանման պատճառ անուզզակի կերպով մի կանցա անուն կին մի ըլլալուն, կանչուեցաւ որ նա եւս իւր գիտցածը պատմէ . յիշեալ կինը կարճ հասակաւ 70 տարեկան պառաւ մի էր,

զոր տեսնողը չէր կրնար հաւատալ թէ այս տեսքով կին մի պատճառ եղած ըլլայ երբէք սպանութեան մի ։ Վ կայութեան կանչուողներէն {մէկն ալ որ ականատես եղած էր, ու ատեան չէր եկած, ուրիշ մի զանիկայ անմեղադիր ընելու համար ըսաց՝ թէ հարիւր տարին անցուցած է, ու ըսկրնար քայլը առնել։ Այս պարագայից վերայ բոլոր ատենակալաց խընդրանօքը ամբաստանեալը ազատ թողուեցաւ :

— Ենթիայի պատերազմը : Կմերիկայի մէջ կուիւր սկսելէն մինչեւ վերը, երկու թշնամի բանակները 252 պատերազմ կամ կուիւր տուին քիչ շատ ծանր . 89 Վ իրձինիայի մէջ . 37 Օթէնէսէսի մէջ . 22 Սիսսուրիի, 12 Շէորձիայի . 10 հարաւային Քարումնայի . 11 հիւսիսային Քարումնայի . 7 Ալապամայի . 13 Լուիզիանայի . 16 Աբբանսասի . 5 Ֆլորիստայի . 5 Դէքսասի . 5 Վարիլանտի . 14 Քէնուուքիի . 1 Բէնսիլվանիայի . 1 Կոր Վէքսիկայի եւ 1 Հնդկային երկրին մէջ :

ԺԵՄԱՆԵԿԱԳՐԸԿԵՆՔ

Քաղաքիս կառավարիչ վսեմափայլ իզզէթ Փաշայն գրեթէ եկած օրէն ի վեր է մասնաւոր հոգ ու խնամք կը տանի սուրբ քաղաքիս փողոցներուն ու շուկաներուն կանոնաւորութեանը, որոնց մեծագոյն մասը արգէն յարդարեց և լայնցուց, փելտալով շուկաներուն երկու կողմը կանգնաշափ լայնութեամբ եղած նստարանի ձեւով ու ահագին քարերով եղած շնչերը . որոնք փողոցներուն ու շուկաներուն կէսը գրաւած էին և մեծ գուտարութիւնու տային անցուդար-

ձի , մանաւանդ ուխտաւորաց բազւ մութեան ժամանակ . և բաց ի նստարանները վերցընելէն , քարայատակ ներն ալ բոլորովին նորոգեց միօրինակ ձեւով : Եւ այս պատճառաւ խանութներուն շատերն ալ նորոգուելով ներկուեցան , որով բաւական պայծառութիւն ստացաւ սուրբ քաջարս :

Ոուրբ Երուսաղէմ որքան որ իւր հնութեամբը և սրբազն յիշատակ ներովը թէ քրիստոնեայ և թէ ան քրիստոնեայ ազգացքով կարեւորութիւն ունի միշտ , այսու ամենայնիւ երկու ինչ կը պակսի իրեն աւելի ծաղկելուն . մէկ մը ջուրը , երկրորդ ձանապարհին անհարթութիւնը , և այս երկու կարեւոր միջոցները քանի մի տարիէն ի վեր է որ եւրոպացոց ուշադրութիւնը գրաւած է , և զանազն ընկերութիւններու կողմէ և սքանի մի անգամ յատուկ մարդիկ և ձարտարապետք եկած են , թէ կենդանի ջուր գտնել ու քաղքին մէջ վաղցընելու համար , և թէ Յոպակէն մինչեւ յլուսաղէմ երկաթուղի շինելու : Առաջինը քաղաքին բարձր ու ապառաժ դիրքին նայելով՝ եթէ անհնարին չէ , դժուարին է ըստ մեզ . իսկ երկաթուղի շինուիլը որչափ որ դիւրին՝ այնքան ալ հարկաւոր է : Վնցեալները փոխանակ երկաթուղւոյ՝ կառուղի շինուելու լուր մը առնելով , մէծ ուրախութիւն եղաւ բընակչաց , և որքան որ չստուգուեցաւ , այսու ամենայնիւ կը յուսամք որ աշխարհաշէն տէրութիւն մի , ինչպէս է (Օսմաննեան կառավարութիւնը , զանց չպիտի ընէ վերջապէս սուրբ քաղաքին հասարակութեան փափաքը լեցընելու : գոնէ կառուղի շինել տա-

լով և տարուէ տարի անհամար աղդերէ եկող ուխտաւորաց բարեմաղթութիւններն ընդունելու , որոնք ամէնքն ալ օրհնող պիտի ըլլան իւր թանկագին կենացը համար :

— Աերկայ յօդուածս մամուլը տրրուելէն յետոյ իմացանք որ (Օսմաննեան բարեխնամ տէրութիւնը յատուկ հրամանագրաւ արտօնութիւն շնորհած է կառուղիի համար , և մօտերս կ'սպասուի , կ'լսեն , գլխաւոր ձարտարապետին գալրւստը որ անմիջապէս պիտի սկսի : Կըսուի թէ հինգ միլիոն դահեկան ծախք պիտի երթայ , և այս ծախքը քաղաքիս բընակիչքը պիտի վճարեն , հարուստք դրամ հատուցանելով , իսկ աղքատք անձամբ աշխատելով որոշեալ կարգաւու :

— Առաջիկայ ամսոյս մէջ Աւստրիոյ տէրութեան չիւպատոս Մէծ . Պ. Վալբէրտը Մոլթիէմգործոյ մի պատճառաւ իւր հայրենիքը երթալով , իրեն փոխանորդ կարգեց առաջին թարգման ու քանչէլիէր յարդապատիւ պարոն Յակոբ Փասքալ Առուրատեանը : Աորին մէծապատռութեցուցած այս յարդանաց և հաւատարմութեան նշանը , նոր յայտարարութիւն կը համարուի հայկազուն Պարոնին բազմամեայ հաւատարիմ աշխատութեանցը զոր ցըցուցած է կայսերական տէրութե իրեն յանձնուած պաշտօնին մէջ : Ուրախ եմք ծանուցանելու որ յիշեալ Պ. Առուրատեանը նաեւ իւր ազգասէր ու բարեպաշտ զգացմունքներովն ալ նըշանաւոր համարուած է ազգայնոց քով , և շատ առիթներու մէջ ցոյց տուած է իւր առ Ա. Աթոռս ունեցած բարի նախանձը :